Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
ապրիլի 1-ի N 460-Լ որոշման

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍՎԱԾՔ (ՎԻՐԱՎՈՐՈՒՄ) ՍՏԱՑԱԾ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁ ՃԱՆԱՉՎԱԾ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ (ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Միջոցառման նպատակն է աջակցություն տրամադրել ռազմական գործողությունների հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) աշխատանքի ընդունած գործատուին՝ նշված անձանց աշխատավարձից հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափով աջակցություն տրամադրելու, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, աշխատատեղի հարմարեցման ծախսերի փոխհատուցման միջոցով:

2. Միջոցառման շրջանակում գործատու է համարվում այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որը 2021 թվականի մայիսի 1-ից հետո աշխատանքային պայմանագիր է կնքել սույն միջոցառման 1-ին կետում նշված և 2021 թվականի ապրիլի 1-ից հետո մինչև սույն միջոցառման շրջանակներում աշխատանքի ընդունվելը «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգում» առկա տեղեկատվության հիման վրա հարկ վճարող չհանդիսացող անձի հետ:

3. Միջոցառման շրջանակներում աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անձի համար՝

1) գործատուին տրամադրվում է աջակցություն՝ այդ անձի աշխատավարձից հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափով, եռամսյակային կտրվածքով՝ առավելագույնը 100 000 դրամի չափով.

2) գործատուի մոտ աշխատատեղի հարմարեցման անհրաժեշտության դեպքում, այդ նպատակով, գործատուին տրվում է միանվագ փոխհատուցում՝ ոչ ավելի, քան 500 000 դրամի չափով:

4. Միջոցառման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված աջակցությունը տրամադրվում է առավելագույնը մեկ տարի ժամկետով:

5. Միջոցառմամբ նախատեսված աջակցությունը տրամադրվում է սույն միջոցառման 2-րդ կետում նշված անձանց վերականգնողական անհատական ծրագրի հիման վրա:

6. Միջոցառումից օգտվելու համար գործատուի կողմից դիմումը ներկայացվում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

7. Աջակցության տրամադրումը դադարեցվում է, եթե լուծվում է միջոցառման շրջանակներում կնքված աշխատանքային պայմանագիրը:

8. Աջակցությունը տրամադրվում է գործատուին՝ նրա բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

01.04.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ